

- 32 Գրնացեալ նոցա՝ արարին զողջոյն,
Որ յանձնիւր ինքեանց՝ յիւրեանց ժողովոյն,
Անդ էր տեսանել թէ զնորդ ի նոյն,
Նըւազիւր ոյժ, կար, խըռովչաց դասուն:
- 33 Յետոյ Սարգիս մեր՝ յայնց առ իւր կոչեաց
Զոմանս ի հրմտաց եւ յերեւելեաց,
Որք չէին բընաւ կամակից յուզաց,
Որոց զիւր խորհուրդ այսպէս պարզ յայտնեաց:
- 34 Պատրաստ եմ ասէրն ի կիւրակէի,
Հաճել միտս բազմաց՝ յատեան քարոզի,
Նահանջեալ զաղմուկն, որով ամբօխի,
Վարժապետն իմ քաջ եւ ազգ մեր բարի:
- 35 Հարկ է ձեզ ապա՝ գալ ի ժամատուն
Սուրբ Աստուածածնի, որ ի Ղուվխաբուն,
Եւ նըստիլ յայնմիկ ցիր եւ ցան ուրոյն,
Ի՛ ըսպասել լըռիկ քարոզի ժամուն:
- 36 Յողբալն իմ անդէն՝ ի վերա ազգիս,
Յիշելով զարարս՝ զսուտ երախտիս,
Զանուն քաջութեան փորձ վարդապետիս,
Լացլիք անդ եւ դուք միաձայն ընդ իս:
- 37 Ապա գոռասլիք մեծ աղաղակաւ,
Ասելով ո՛ր է Պատրիարզ մեր լաւ,
Տառապանք նորա՝ մեզ վիշտ է եւ ցաւ,
Վատաց արարմանց չախորժիմք բընաւ:
- 38 Եկեսցէ ի յայտ՝ կացցէ յաթոռ իւր,
Վըստահ հովուեսցէ՝ զ՞մեզ իւրաքանչիւր,
Պատրաստ եմք ահա՛, հալածել ՚զ՞ֆիւթիւր
Եւ զիւր համախոհս՝ թէ եւ իցեն բիւր: